Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2003թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին

2003թ. կարևորագույն արդյունքն է ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանի կողմից հրատարակած «Ազատագրական պայքարի ուղիներում» մեծարժեք մենագրության 1-ին և 2-րդ գրքերը (նախատեսվում է 4 գիրք): Դրանք ընդգրկում են 1904-1907թթ. հայ ազատագրական հերոսական պայքարի պատմությունը: Աշխատության մեջ պատմագիտական հարուստ գրականության, բազմալեզու արխիվային նյութերի լայն հենքի վրա բազմակողմանիորեն քննության են առնվում Առաջին աշխարհամարտին նախորդած տարիներում Հայաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

Բազմավաստակ գիտնական Հ.Ռ.Սիմոնյանի այս կապիտալ աշխատությունն անգնահատելի ներդրում է հայ պատմագիտության մեջ:

Ինստիտուտի ձեռքբերած նշանակալի արդյունքներն են պետբյուջեից ֆինանսավորվող 21 գիտահետազոտական թեմաների գծով կատարված զգալի աշխատանքները, հրատարակած և հրատարակության հանձնված մի շարք մենագրություններն ու ժողովածուները, տասնյակ գիտական հոդվածները և հրապարակումները, մասնակցությունը հանրապետական և միջազգային հայագիտական բազմաթիվ գիտաժողովներին:

Ինստիտուտի ձեռքբերած կարևորագույն արդյունքներից է նաև «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորյակի երկրորդ հատորի հրատարակությունը: Հեղինակային կոլեկտիվը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի ղեկավարությամբ ստեղծել է Ասիայի և Աֆրիկայի հայ գաղթօջախների ամբողջական պատմությունը՝ նրանց սկզբնավորումից մինչև 1920թ.: Հարուստ սկզբնաղբյուրների ու հարցին աղերսվող գրականության հիման վրա վեր են հանվել գաղութահայության կյանքի ամենատարբեր կողմերը:

Ինստիտուտի նշանակալի ձեռքբերումներից է «Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)» (ղեկ.՝ պ.գ.թ. Դ.Մուրադյան) թեմայի շրջանակներում հրատարակված «Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914թթ.)» (խմբագիր պ.գ.դ. Է.Կոստանդյան) գիտական հոդվածների ժողովածուն, որը նվիրված է հայ իրականության մեջ ձևավորված Արմենական, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Վերակազմյալ հնչակյան, Հայ սահմանադրական ռամկավար, Սոցիալիստ հեղափոխականների, Սպեցիֆիկների կուսակցությունների, ՌՍԴ(բ)Կ

Անդրկովկասի և Հայաստանի կազմակերպությունների ստեղծման ու գործունեության անաչառ պատմությունը:

2003թ. Պատմության ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն արդյունքն է նաև «Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին» (ղեկ.՝ պ.գ.դ. Ա.Մելքոնյան) թեմայի շրջանակներում հրատարակված ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Մելքոնյանի «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» ծավալուն մենագրությունը: Այն նվիրված է հայ պատմագիտության կողմից սակավ հետազոտված՝ Ջավախքի պատմության հիմնախնդիրներին: Հեղինակը հայ և օտար բազմաբնույթ սկզբնաղբյուրների հարուստ հենքի, ինչպես նաև հարցին առնչվող բազմալեզու գրականության հիման վրա. հայ պատմագրության մեջ առաջին անգամ ներկայացրել է Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ջավախք գավառի ամբողջական պատմությունը՝ սկզբից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը: Ընդհանրացնելով իր ձեռքի տակ եղած մեծածավալ նյութը հեղինակը հանգել է մի շարք կարևոր եզրահանգումների, որոնք միանգամայն նոր խոսք են հայ պատմագիտության մեջ:

Ինստիտուտի նվաճումներից է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Գալոյանի «Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում 16 դարից մինչև 1917թ.» արժեքավոր ուսումնասիրությունը նվիրված Հայկական հարցի քննական վերլուծությանը: Հեղինակը պատմական նորահայտ սկզբնաղբյուրների՝ հիմնականում Արևմտյան Եվրոպայի երկրների արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությամբ շարադրել է Հայկական հարցի պատմությունը նշված ժամանակաշրջանում:

Ինստիտուտի գիտական կյանքում կարևոր էին նրա 60-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունները, որոնք սկսվեցին ինստիտուտի հրատարակած գրքերի ցուցահանդեսի, գիտավարչական մասի, համակարգչային բաժնի և նիստերի դահլիճի բացման արարողություններով: Հանդիսությունը բացեց ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանը: Ողջույնի խոսքերով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ.Սարգսյանը, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը: Ինստիտուտի 60-ամյա գործունեությունը ներկայացրեց Գ. Գրիգորյանը, որը հրատարակել է նաև Պատմության ինստիտուտի 60-ամյակին նվիրված գրքույկ: Հանդիսությունների շրջանակներում Շիրակի Սառնաղբյուր գյուղում կազմակերպվեց գիտաժողով՝ նվիրված Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի հանրապետության 85-ամյակին:

2003թ. ինստիտուտի գիտխորհրդի և ղեկավարության ուշադրության կենտրոնում է մշտապես գտնվել աշխատանքը երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների հետ: Կազմակերպվել և անց է կացվել երիտասարդ գիտաշխատողների հերթական 28-րդ նստաշրջանը: Ինստիտուտը սեփական ուժերով հրատարակության է պատրաստել «Հայոց

պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուի 4-րդ հատորը, ուր զետեղված են շուրջ 20 գիտական հոդված:

Ինստիտուտի գիտաշխատողների կողմից 2003թ.
հրատարակած մենագրությունների ցուցակը

1. Մելքոնյան Ա.Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, ,,Զանգակ-97,,
2. Սիմոնյան Հ.Ռ., Ազատագրական պայքարի քառուղիներում, գիրք 1, Երևան, Հայագիտակ
3. Սիմոնյան Հ.Ռ., Ազատագրական պայքարի քառուղիներում, գիրք 2, Երևան, Հայագիտակ
4. Հայ գաղթաշխարհի պատմություն, հատոր 2, Երևան, ՀՀ ԳԱԱ ,,Գիտություն,, (Վ.Ա. Միքայելյանի խմբագրությամբ)
5. Համբարյան Ա.Ս., Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914թթ., Արմավիր, ,,Պարգև Ոսկանյան,,
6. Գրիգորյան Գ.Ս., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 60 տարին, Երևան, ՀՀ ԳԱԱ ,,Գիտություն,,
7. Մխիթարյան Մ.Հ., 1848-1849թթ. հունգարական հեղափոխության արձագանքները հայ իրականության մեջ, Երևան, ՀՀ ԳԱԱ ,,Գիտություն,,
8. Գալոյան Գ.Ա., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում 16 դարից մինչև 1917թ., Երևան, ՀՀ ԳԱԱ ,,Գիտություն,,
9. К.А. Арутюнян, Л.А.Степанян, Маршал Победы – И.Х.Баграмян, Ереван, ,,Зангак-97,,
10. Կոստանդյան Է.Ա., Կոնստանդնուպոլսի ,,Արևելք,, թերթը, Երևան, ՀՀ ԳԱԱ ,,Գիտություն,,
11. Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914թթ.) (Է.Կոստանդյանի խմբագրությամբ), Երևան, ,,Եգեա,,
12. Համբարձումյան Ռ., Գարեգին Նժդեհ (Համառոտ կենսագրական, ասույթներ և կենսատարեգրություն), Երևան, ,,Նախիջևան,,

2003թ. ինստիտուտում իրականացված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ինստիտուտում գործող թեմատիկ խմբերն ընդգրկվել հետևյալ բաժիններում՝

- Հին Հայաստանի պատմություն (բաժնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ Ս.Կրկյաշարյան)
- Հայաստանը միջին դարերում (ՀՀ ԳԱԱ ակադ. Հ.Բարթիկյան)
- Հայաստանը նոր շրջանում (պ.գ.դ. Է.Կոստանդյան)
- Հայ գաղթավայրերի և սփյուռքի պատմություն (ՀՀ ԳԱԱ ակադ. Վ.Միքայելյան)

- Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության պատմություն (պ.գ.դ.,պրոֆ. Ս.Ստեփանյան)
- Հայաստանի 1-ին հանրապետության պատմություն (ՀՀ ԳԱԱ ակադ. Հ.Ավետիսյան)
- Խորհրդային Հայաստանի պատմություն (պ.գ.դ.,պրոֆ. Վ.Ղազախեցյան)
- Հայաստանի 3-րդ հանրապետության պատմություն (պ.գ.դ.,պրոֆ. Գ.Գեղամյան)

Հաշվետու տարում ինստիտուտի տնօրեն Ա.Ա.Մելքոնյանը և ինստիտուտի բաժնի վարիչ ակադեմիկոս Հ.Ա.Ավետիսյանը պարգևատրվել են ,,Մովսես Խորենացու,, անվան շքանշանով: ՀՀ ԳԱԱ գովեստագրերով պարգևատրվել են ինստիտուտի երիտասարդ գիտնականներ, պատմական գիտությունների թեկնածուներ Ս.Մինասյանը և Հ.Բոյաջյանը:

ՊԻ անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները,
և այլ գիտական միջոցառումները

N	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1	Գիտաժողով, նվիրված ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին	ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 11.07.2003թ. ՊԻ	125	5
2	Գիտաժողով, նվիրված 1918թ. մայիսյան հերոսամարտերին և Հայաստանի 1-ին Հանր-ն ստեղծման 85-ամյակին	Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղ 13.07.2003թ. Պատմության ինստիտուտ	150	-
3	Երիտասարդ գիտնականների և ասպիրանտների 28-րդ նստաշրջան	ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 14-15.07.2003թ. ՊԻ	90	3
4	Գիտաժողով, նվիրված Ս.Զավարյանի 90-ամյակին	ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ 14.10.2003թ. Պատմության ինստիտուտ, «Ս.Զավարյան» միություն	65	-
5	Գիտաժողով, նվիրված Թուրքմենչայի պայմանագրի 175-ամյակին	ՀՀ Կառավարական տան նիստերի դահլիճ 24.10.2003թ. Ռուս-հայկական համ-ն Պատմության ինստիտուտ	70	10
6	Հին Հայաստանի պատմության հիմնահարցերին նվիրված գիտաժողով	Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 13-15.11.2003թ. ՊԻ	150	6
7	Գիտխորհրդի ընդլայնված նիստ, նվիրված ՀՀ ԳԱ թղթ-անդ Ս.Կրկյաշարյանի 75-ամյակին	Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 08.12.2003թ. ՊԻ	100	5

ՊԻ աշխատակիցների արտասահման, այդ թվում
ԱՊՀ-անդամ երկրներ, կատարած գործուղումները

Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
	Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
ԱՄՆ	2	-	-
Ռուսաստան	2	1	2
Վրաստան	-	-	1
Գերմանիա	-	1	-
Իտալիա	2	-	-
Սիրիա	1	-	-
Անգլիա	-	1	-

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն
ՊԻ-ում

Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
	գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
3	4	5	6
Ռուսաստան	5	1	1
ԱՄՆ	6	1	1
Ուկրաինա	1	1	-
Գերմանիա	1	-	1
Սիրիա	1	1	1
Վրաստան	2	-	1
Եգիպտոս	1	-	1

ՊԻ գիտաշխատողների 2003թ. հրապարակումների ընդհանուր քանակը

Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումների թեզիսներ և այլն	
Հանր.	Արտասահմ.	Հանր.	Արտասահմ.	Հանր.	Արտաս.
13	-	-	1	114	13

Ասպիրանտների թվաքանակը

Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1. 01. 2003թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
ա)կ	ա)չկ	ա)կ	ա)չկ
2	3	4	5
5	10(4)	3	3(1)

ՊԻ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

Աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	ԳԱԱ ակադեմիկոսներ (այդ թվում կանայք)	Գիտության դոկտորներ (այդ թվում կանայք)	Գիտության թեկնած. (այդ թվում կանայք)
128(52)	102(29)	6(-)	29(2)	53(17)

Մասնագիտացված գիտական խորհուրդների աշխատանքները

Մասնագիտությունը	Պաշտպանությանությունների թիվը			
	Ինստիտուտի աշխատակիցների կողմից		Ինստիտուտից դուրս հայցողների կողմից	
	դոկտ.	թեկնած.	դոկտ.	թեկնած.
2	3	4	5	6
Հայոց պատմություն և պատմագրություն	-	1	3	6

Պատմության ինստիտուտի տնօրեն,

պատմական գիտությունների դոկտոր Ա.Ա.Մելքոնյան